ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/10 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Երևան «26» դեկտեմբերի 2023թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«30» նոյեմբերի 2023թ. թիվ 885 և «05» դեկտեմբերի 2023թ. թիվ 914** հրամաններով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/10** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթցակարգ) հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Արմեն Դանիելյան՝ Հանձնաժողովի նախագահող
Արաքսյա Իսախանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.1 **«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ, «Դակշին» ՍՊԸ, «Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ ՀԳ**-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը՝ կից փաստաթղթերով, ենթակա են հետագա գնահատման:

2. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված.

Չափաբաժին 1

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ, «Դակշին» ՍՊԸ, «Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ ՀԳ	1,531,105,875.374 /մեկ միլիարդ հինգ հարյուր երեսունմեկ միլիոն մեկ հարյուր հինգ հազար ութ հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ երեք հարյուր յոթանասունչորս լումա/	306,221,175.075 /երեք հարյուր վեց միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար մեկ հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ յոթանասունհինգ լումա/	1,837,327,050.449 /մեկ միլիարդ ութ հարյուր երեսունյոթ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար հիսուն ՀՀ դրամ չորս հարյուր քառասունհինգ լումա/	Առկա է

2.1 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը (Հավելված 2) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

3.1 Մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակցի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, սակայն հայտին կից առկա չէ որևէ այլ փաստաթուղթ՝ տվյալների իսկությունը ստուգելու համար, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

3.2 համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված երաշխիքը Մասնակցի կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով,

անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված երաշխիքի թողարկման իսկությունը:

4 Հանձնաժողովը որոշեց.

4.1 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ Մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

4.2 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակցի բանկային երաշխիքի իսկությունը:

5 *Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը*

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 2024 թվականի հունվարի 10-ին, ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի

նախագահ՝

Արմեն Դանիելյան _____

անդամներ՝

Արաքսյա Իսախանյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Լուսինե Ղազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

քարտուղար՝

Ռոզա Դանիելյան _____